

ցատրած ժամանակ ցոյց տուաւ Քրիստոսի, Մովսէսի, Եզրայի և Առաքելոց կեցած տեղերը, «որ եւն հրաշագան եկեղեցիք եւ եկեղեցքեկիք»: Մենակեացի մեկնելէն վերջ, նորահաւատ պարսիկը շրջակայ գիւղերու մէջ քրիստոնէական քարոզութիւն ըրած ժամանակ կը նահատակուի: Մենակեացին բացատրութեան նայելով՝ Թարոր լերան վրայ տակաւին շատ անխախտ տուններ կային, թերեւ քանի մը եկեղեցիներ ալ. բայց Դարանաղլին իր շինած եկեղեցքեկիք բառով կը հասկցնէ թէ տեղւոյն եկեղեցիներուն շատերը կործանուած էին:

Վերագոյն բոլոր տողերուն մէջ տեսանք արդիւնքը հաւատքին այն քաջահաւատ անձերուն որ Քրիստոսի Այլակերպութեան փառքին համար Թարորի վրայ բարձրացուցին ամենէն հոյակապ յիշատակարանները՝ զոր քանդեց թշնամիին ձեռքը. և հոն դարերէ ի վեր սրբավայրերու աւերակները շեղջակուտուած են և ամայութիւն կը տիրէ: Բայց մենք առանց Թարոր բարձրանալու և աւերակները տեսնելու կրնանք զմայլիլ դարեր յառաջ հոն ապրող կրօնաւորներուն կեանքին, և անոնց նման կրկնել սրբազան քերթողին սա սրտաուռչ կրգը.

«Հաւքարձցես գեղեղ, Տէր, առաւել քան զգալի զԹարորակակ գեղառն, յերկաքերձ եւ յիսմակայի խորակայ»:



L 7

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐԻՔՈՎԻ ՍԷՋ

(Կրտի վանքը)

1.— Վերնագրիս կրտի բառը սեռականն է կուրտ բառին՝ զոր կը գործածեն Ոսկեբերանի Եսայեայ մեկնութեան հայ թարգմանիչը, Մխիթար գօշ՝ իր Դասասանագիրին մէջ, Ոսկեփորիկ, Վարդան Պասախ, Ռոհայեցի և Սանահնեցի: Կուրտ կը նշանակէ ներքինի. թէ ինչու համար Երիքովի այդ վանքը կրտի կը կոչուի, ստորև պիտի բացատրենք: